

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Տ.
Հայաստանի պատմության թանգարան.
sardarapatasatryan@gmail.com

ԱՐԾԱԹԸ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Միջնադարյան հայկական աղբյուրներում բազմաթիվ են գանձ կազմող նյութերի և իրերի թվարկումները: Դրանց ընդհանրական-վերացական բնույթը ցույց է տալիս, որ հեղինակները հաճախ ներկայացնում են ոչ թե կոնկրետ գանձը և դրա կոնկրետ տեսականին, այլ գանձի մասին ընդհանրական պատկերացումը: Մյուս կողմից էլ նման վերացական նկարագրումը հնարավոր է դարձնում վերականգնել գանձը կազմող նյութերի և իրերի ընդհանրական աստիճանակարգը: Այն, անկասկած, գլխավորում էր ոսկին, ոսկուն հաջորդում էր արծաթը, արծաթին՝ թանկարժեք քարերը, ապա գործվածքներն ու հանդերձը, արքայական-տոհմական նշանները և, ի վերջո, զուտ հոգևոր-եկեղեցական իրերը՝ խաչեր, մասնատուփեր, մատյաններ և այլն:

Այսօր հայոց լեզվում բազմաթիվ են գեղեցիկը նկարագրող բառերը, որոնք կազմված են «արծաթ» բառարմատից: Արծաթը՝ որպես գեղեցիկի հոմանիշ և չափանիշ, ինչպես նաև որպես կանացի խորհրդանշան, իր արտահայտությունն է գտել գրականության մեջ՝ արձակում և պոեզիայում, ազգագրական և բանահյուսական նյութերում:

Զեկույցում պատմա-ազգագրական և բանահյուսական նյութի համադրությամբ ներկայացվելու են արծաթի և դրա խորհրդաբանության հետ կապված հայ ժողովրդական ընկալումներն ու պատկերացումները:

ԱՍՍՏՏՐՅԱՆ Կ.Ս.
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի
պատմության ազգային թանգարան.
sardarapat01.22@gmail.com

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՐՏԱՑՈՂԱՆՔԸ ՀԱԹ-Ի ԶԱՐԴԱՏՈՒՓԵՐԻ ՎՐԱ

Հայոց ազգագրության ազգային թանգարանում են պահպանվում Լաուրա Վարդանյանի և Լաուրա Սարգսյանի հեղինակած XX դ. թվագրվող փայտյա զարդատուփեր՝ գեղազարդված պապիե-մաշե տեխնիկայով: Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել Հայոց ազգագրության ազգային թանգարանի հավաքածուում ներառված զարդատուփերի բնութագիրը: Թանգարանային առարկաներն առանձնանում են հայկական մշակույթին բնորոշ թեմատիկ պատկերներով: Վերլուծության համար որպես մեթոդ, զուգահեռ ենք անցկացրել հայ գուսանական երգերի հետ, որոնք դիպուկ կերպով բնութագրում են զարդատուփերի հորինվածքներում ներկայացված թեմատիկ պատկերներն ըստ իրենց իմաստաբանական բովանդակության:

Թանգարանային առարկաների գեղազարդման մեջ հեղինակները ցուցաբերել են ինքնատիպ ստեղծագործական մոտեցում՝ հայկական մշակութատարածքը բնութագրող արժեքներ պատկերելով զարդատուփերի վրա:

Զարդատուփերի վրա ամփոփված են զանազան պատկերներ, որոնք ներկայացնում են մշակույթը կրողին, կնոջ արտաքին կերպարի առանձնահատկություններ:

Դրանց թեմատիկ պատկերները ներկայացնում են հայկական կենցաղը, բարքերը, տոնահանդեսները, ինչպես նաև տարազային լուծմամբ հագուստներ:

Զարդատուփերի վրա հատուկ անդրադարձ կա ժողովրդական նվագարաններին, պարարվեստին և տոնախմբությանը:

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՃԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԴԵՐՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԿԵՆՏՐԱԼՈՒՄ XX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ**

Զեկույցը նպատակ է հետապնդում ներկայացնել Երևանի հախճապակու գործարանի պատմությունը՝ ընդգծելով գործարանի գործունեության արդյունքում քաղաքային կենցաղ թափանցած այն սովորություններն ու ավանդույթները, որոնք տարիներ շարունակ երևանցու առօրյայի մաս են կազմել: Ուսումնասիրությունը կատարվել է Հայաստանի ազգային արխիվում, Երևան քաղաքի պատմության թանգարանում պահպանվող նյութերի, ինչպես նաև բանահավաք նյութի և մամուլի ուսումնասիրության հիման վրա:

1947թ.-ին Երևանում հիմնադրվում և Խորհրդային Հայաստանի տեղական արդյունաբերության մինիստրության ենթակայության տակ իր գործունեությունն է ծավալում հախճապակու գործարանը: Գործարանի հիմնական խնդիրն էր կազմակերպել ճենապակյա, հախճապակյա, կերամիկական լայն սպառման կենցաղային և դեկորատիվ գեղարվեստական իրերի արտադրությունը, ինչպես նաև պատրաստի արտադրանքի առաքումը ՍՍՀՄ ողջ տարածք, Չեխոսլովակիա, Լեհաստան, Հարավսլավիա: Համաձայն վերը նշված մինիստրության 1975 թ.-ի հուլիսի 10-ի Հ.138 հրամանի՝ կազմակերպվում է «Հայճենապակի» արտադրական միավորումը, որի կազմի մեջ մտնում էին Երևանի հախճապակու, Արտաշատի բրուտա-խեցեգործական և ճենապակու գործարանները:

Արդյունաբերական կարևոր նշանակությունից զատ՝ գործարանը քաղաքի առօրյա էր բերել մի շարք ավանդույթներ, որոնք քաղաքային մշակույթի ձևավորման հարցում իրենց ուրույն դերակատարումն ունեցան: Այդ ավանդույթները հատկապես տեղավորվում էին հյուրընկալության ազգային առանձնահատկությունների սահմաններում, երբ Երևան ժամանած օտարազգի կամ ծագումով հայ հյուրերին ըստ առժանվույն հյուրընկալելը ծիսակարգի նմանվող պարտադիր արարողությունների շարք էր ենթադրում, իսկ բառիս ամենաուղիղ իմաստով՝ Երևանի հախճապակու գործարանը անմասն չէր հյուրընկալության այդ «ծիսակարգից»: Գործարանի կողմից ջերմ հյուրընկալության էին արժանանում թե՛ Երևան ժամանած պետական պաշտոնյանները, թե՛ ուղղակի զբոսաշրջիկներ, ովքեր հեռանում էին՝ որպես հուշանվեր իրենց հետ տանելով գործարանի արտադրած հախճապակե արձանիկներն ու սափորները: Առանձին ուշադրության են

արժանի մինչև 1976 թ. գործարանի արտադրած՝ գրականության և արվեստի դասական կերպարները մարմնավորող արձանիկները: Վ. Տերունու հեղինակած Հ. Թումանյանի գրական կերպարները՝ «Անուշը», «Սարոն», Խաչատուր Միրիջանյանի «Օթելլո»-ի կերպարով Վահրամ Փափազյանը, «Սայաթ Նովան», Ռ. Պետրոսյանի «Աստվածուհի Նանեն», «Հագարան բլբուլը», «Ախթամարը», Ա. Չաքմաքչյանի «Խաչատուր Աբովյան»-ը, «Սասունցի Դավիթ»-ը, Հ. Սիմոնյանի «Ուզունդարա»-ն, Թ. Միրզյանի «Բալետի պարուհի»-ն և այլն, քաղաքի կենցաղում դարձել էին ոչ միայն ճաշակի և նորաձևության թելադրող, այլև հանձն էին առել ազգային գաղափարախոսության քարոզչություն, որը առանց որևէ խոչընդոտի յուրացվում էր հասարակության ամենատարբեր շերտերում:

Այժմ Երևանի հախճապակու գործարանի արտադրանքը առօրյա կենցաղից դուրս է մղվում և թանգարանացվում: Երևան քաղաքի պատմության թանգարանի «Արտադրական» պահոցում պահպանվում է գործարանի բավականին հարուստ հավաքածու, որը դարձել է անցյալի արդյունաբերական հսկայի թողած ժառանգության ներկա վկայությունը:

ԲԱԶԵՅԱՆ Կ. Ռ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն.
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
bazeyan60@yandex.ru

**«ԲԱՆՎՈՐ» ԹԵՐԹԸ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ 1926 թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՀԱԶՈՐԴԱՄ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1926 թ. երկրաշարժը մեծապես ազդեց Լենինական քաղաքի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման ու նրա նոր դիմագծի ձևավորման վրա: Հետերկրաշարժյան գործընթացների, քաղաքային նոր կենցաղի ձևավորման, տնտեսամշակութային, հասարակական հարաբերություններում կատարվող փոփոխությունների վերաբերյալ շատ արժեքավոր ու հետաքրքիր տեղեկություններ է պարունակում «Բանվոր» թերթը: Զեկուցման մեջ ընդհանուր գծերով ներկայացվելու են 1926-1930-ական թվականների Լենինականյան կյանքը, վերականգնման ուղղությամբ կատարվող աշխատանքներն ու դրանց ուղեկցող սոցիալական, մշակութային և ժողովրդագրական գործընթացները:

**ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ.
ՌՈՒՔԵՆ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ**

Նախապատերազմական Հալեպի ամենաերևելի դեմքերից էր Ռուբեն Պարսումյանը: Պարսումյանները ցեղասպանությունից հետո Այնթապից հեռացած և Հալեպում հաստատված հայերից էին: Նրանց տոհմական արհեստը եղել է ձուլագործությունը, որով զբաղվել են շուրջ 160 տարի: Պարսումյանի նախահայրերը նշանավոր են եղել իրենց պատրաստած կաղամարներով (գրչակալ, տիվրիկ): Ռուբեն Պարսումյանը հայտնի էր նախ որպես ձուլագործ ապա՝ հնավաճառ: Տարիների ընթացքում նա հավաքել է չափազանց արժեքավոր հավաքածու: Հատկապես ուշադրության արժանի են նրա՝ դրամների, արծաթեղենի և մասնավորապես, հայ պղնձագործությանը վերաբերող հավաքածուները: Տարիների ընթացքում նրան հաջողվել էր կուտակել արհեստագործությանը վերաբերող արժեքավոր տեղեկություններ: Ցավոք, Պարսումյանը 2019 թ. մահացավ՝ իր հետ տանելով անչափ կարևոր տեղեկություններ: Նրա գրավոր ժառանգությունը չափազանց սեղմ է, որոշ բաներ պատրաստվում են հրատարակության: Այս զեկուցման ընթացքում նախատեսում ենք ցուցադրել մի քանի սիրողական նկարահանումներ, որտեղ Պարսումյանը ներկայացնում է իր հավաքածուից մի շարք առարկաներ:

ՄԱՏԻԿՅԱՆ Հ. Հ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն.
բանասիրական գիտությունների թեկնածու
hasvrej@mail.ru

**ԿԵՆՏԱՂԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ
(միջգիտակարգային ուսումնասիրություն)¹**

Շիրակի մանկական բանահյուսությունն ունի հորդ երակներ միջգիտակարգային ուսումնասիրություն կատարելու առումով: Հետազոտությունն իրականացրել ենք ազ-

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6B030 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

գագրություն-բանահյուսություն գիտակարգերի շրջանակներում՝ Շիրակի մարզում իրականացված բանահավաքչական աշխատանքների արդյունքներով:

Ուսումնասիրության կիզակետում են Շիրակի կենցաղն ու վերջինիս նկարագիրը մանկական բանահյուսական տեքստերում: Որպես համեմատություն՝ անդրադարձել ենք նաև Հայաստանի ազգագրական այլ տարածաշրջանների մանկական տեքստերին:

Կենցաղը՝ լինելով տեքստի կարևոր միջավայր, մեծ ասելիք ունի շիրակյան բնագրերի համապատկերում: Կենցաղային որոշ գործեր, մասնավորապես՝ խնոցի հարելը, բուրդ գգելը, բամբակ մանելը և այլն, լայն տարածում ունեն Շիրակի մանկանոցում: Ահավասիկ, խաղասացը երգում է՝

Խնոցի-հարոցի,

Թանը ընձի,

Կարագը քեզի (ասում են երեխային խաղացնելու ժամանակ):

Կենցաղային միջավայրը երբեմն «ծնում» է նոր տեքստեր. դառնում է տեքստածին աղբյուր: Ուշագրավ է այն, որ թե՛ ավանդական, թե՛ հեղինակային գործերում շեշտադրվում է քուրսու՝ շիրակյան կենցաղի կարևոր բաղադրիչի իրողությունը: Մեջբերենք Ղ. Աղայանի «Օձամանուկ և Արևահատ» հեքիաթից մի հատված. *Չմեռն էր: Հասակավոր մարդիկը հավաքվել էին օղեքր, այնտեղ էին գրույց անում, հեքիաթ ասում և իրանց անօրյա հոգսերի վրա խոսում, խորհրդածում: Գյուլնազ տատի թոռներն էլ, քուրսու չորս կողմովը բոլորված, իրանց տատին էին հեքիաթ ասել տալիս՝ ականջ դնում:*

Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում քուրսին եղել է կենցաղի առանցքային մաս և թափանցել է մանկական բանահյուսության տարածք: Այդ են վկայում նաև շրջանների բանահյուսական տեքստերը.

Նաղ, նաղ ամիս ի,

Խարար բերեք խերն ասի,

Քյուռսին քյաշեքյ, շընթրոքեքյ,

Հանգյաճ արեքյ ու մըռփեք (ընդգծումը մերն է)...

Բանասաց՝ Վանուշ Գալստյան, 38 տարեկան, ծնվել է Ջովունի գյուղում, կրթությունը՝ միջնակարգ: Նախնիները գաղթել են Խոյից: Գրառող՝ Հասմիկ Մատիկյան:

**ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ «ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ»
ՈՐՊԵՍ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ**

Գ. Խալաթյանը գիտական հանրությանը հիմնականում հայտնի է որպես պատմաբան, գրականագետ և ազգագրագետ: Ռ. Աբրահամյանը, բարձր գնահատելով նրա բանասիրական գործունեությունը, նշում է, որ Խալաթյանը «...աշխատում էր հայագիտության այն բաժնում, որ շատ անելի մեծ կարիք ունի հմուտ և լուրջ պատրաստությամբ ունեցող գիտնականների»: Խալաթյանը նաև եռանդուն կազմակերպիչ էր, հարգված ազգային-հասարակական գործիչ: Երեսնամյա գիտամշակութային գործունեության ընթացքում Խալաթյանի խմբագրապետությամբ լույս են տեսնում «Էմինեան ազգագրական ժողովածուի» ութ հատորները, որոնցում տեղ են գտնում հայերենի տարածքային տարբերակներին նվիրված բարբառագիտական նյութեր, բարբառային արժեքավոր բնագրեր, բառարաններ: Որպես բարբառագիտական ուսումնասիրության նյութեր՝ նշանակալից են Ս. Հայկունու գրառած տեքստերը, հայ-քրդական վեպը, ինչպես նաև Հրաչյա Աճառյանի բարբառագիտական աշխատանքները և անվանի լեզվաբանի հեղինակած գավառական, ինչպես նաև թուրքական փոխառությունների բառարանները:

Արժևորելով Ս. Հայկունու բանահավաքչական գործունեությանը՝ Գ. Խալաթյանը Ջ հատորի խմբագրականում գրում է. «...ներկայ հատորը նիւթերի ճոխութեամբ և բազմատեսակութեամբ գերազանցում է բոլոր նման ժողովածուները, որոնք լույս են տեսել մինչև այսօր հայ գրականության մէջ. միայն բարբառների և գաւառալեզուների թիւը, որոնցով յառաջ են բերուած ժողովրդական բանաստեղծութեան այս կամ այն տեսակները, հասնում է յիսունի»:

Լազարեան ճեմարանի հանդեսի առաջին հատորում «Փշրանք Շիրակի ամբարներին» խորագրի ներքո գետեղված են Աղ. Մխիթարյանի հավաքած բարբառային ուշագրավ նյութեր: Հատորի հավելվածում ներկայացված է Կարնո բարբառի Շիրակի խոսվածքի հիմնական բառապաշարն ամփոփող համառոտ բառարան: Զեկուցման ընթացքում կներկայացնենք Խալաթյանի հեղինակած խմբագրականները, որոնցում նա կատարում է բարբառների դասակարգում, տեսակետներ է հայտնում հայերենի բարբառների մասին, տարբերակում է *բարբառ* և *գավառալեզու* հասկացությունները, որոնք,

ըստ էության, համարժեք են *բարբառ* և *խոսվածք* ընկալումներին: Կառանձնացնենք հանդեսում ներկայացված բարբառային հիմնական խմբերը, գրառված նյութերի հիմնական ժանրերը, քննության կենթարկենք Շիրակի տարածքին բնորոշ բուսանունները:

ՊՈՂՈՍՅԱՆ Ս. Հ.

**Սրդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան.
պատմական գիտությունների թեկնածու
sv_ethnomuseum@yahoo.com**

**ՄԵՌԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԵՁ.
ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆՑՈՒՄՆԵՐ**

Կանանց հագուստը դիտարկելիս մի միտք է առկայծում, որ կինը, նրա վարքը գտնվել են հանրային հսկողության ներքո, և վերջինս թույլ չի տվել որևէ շեղում ընդհանուր կանոնից և թաքուի շրջանցման որևէ փորձ: Ավանդությանին հասարակությունում տարազը որոշակիորեն կանոնակարգված և սահմանված բնույթ է ունեցել: Կինը չէր կարող գլխաբաց լինել, չպետք է երևային նրա թևերը և սրունքները, մինչդեռ պետք է երևային նրա վարտիքի փողքերի ծայրերը, ամուսնացած կինը անպատճառ պիտի հյուսեր մազերը և կրեր գոգնոց՝ որպես սեռատարիքային կարգավիճակի ցուցիչ: Աղջիկների համար էլ, ըստ վայելչության ընդունված նորմերի, սահմանված էին որոշ կանոններ:

Հայոց միջնադարյան եկեղեցական կանոններով՝ կնոջը խիստ արգելվել է տղամարդու հագուստ կրել: Չնայած կանոնի հարուցած արգելքին՝ հայոց սովորությանին իրավունքը թույլ էր տալիս խախտել այն կյանքի ծայրահեղ պայմաններում, հանուն հասարակության բարօրության, ինչպես նաև՝ երաժշտի դեպքում, երբ կանայք, անձրև առաջացնելու ակնկալիքով, տղամարդու շորերով և գլխարկ ծածկած՝ լծվում էին արորին՝ չորացած գետի հունը հակառակ ուղղությամբ վարելու:

Կին, թե աղջիկ, հնազանդելով հասարակական կարծիքի պահանջներին, քննադատվելուց և ծաղրվելուց խուսափելու համար արել են այն, ինչ «պահանջում էր աղաթը», որը նպաստել է տարազի ավանդական կառուցվածքի և ձևերի կայունացմանը:

Ավանդական հասարակությունում, սակայն, եղել են ընդունված նորմերի շրջանցման եզակի դեպքեր: Ուշագրավ է Ս. Զելինսկու այն հաղորդումը, ըստ որի՝ 1890-ական

թվականներին Շիրակում հանդիպել է մի քանի կանանց՝ տղամարդու հագուստով: Առանձնակի հիշատակել է մի երիտասարդ աղջկա՝ ներկայիս Անիի շրջանի Բագրավան գյուղից, որ շրջել է տղամարդու առօրյա հագուստով, օգնել հորը երկրագործական աշխատանքներում և հաճախ սայլով աղի գնացել:

Սրանք եզակի դեպքեր են, որոնք ցույց են տալիս ընդունված նորմերի նշանակությունը: Հագուստի փոխանակումը կնոջ և տղամարդու տեղի, դիրքի և սկզբունքների փոխանակությունն է: Միայն լիմինալ իրավիճակներում համայնքը կթույլատրեր շեղում ընդհանուր և կանոնակարգված դրվածքից, տվյալ դեպքում՝ այդ սեռին հատուկ տարազի կենցաղավարվող համալիրից:

Հայկական մշակույթում կինը կերպարանափոխվել է, հագնելով տղամարդու շոբեր, միայն ծիսական արարողությունների ժամանակ և համայնքի կյանքին սպառնացող իրավիճակում:

Կերպարանափոխում կարող էր տեղի ունենալ նաև թատերայնացված գործողությունների ժամանակ կամ ծպտման և քողարկվելու նպատակով:

ՄԱՀԱԿՅԱՆ Կ. Ա.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն.
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
sahakyanani@mail.ru
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ռ. Պ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն.
vard-rosa@mail.ru

**ԷՊԻՏԱՖԻԱՆԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՐՀՐԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՏՈՒՄ**

Էպիտաֆիաները ժողովրդի գեղարվեստական մտածողության ու աշխարհատեսության քարեղեն վկայությունն են, որ ամփոփում են մարդկային հույզեր, ապրումներ, չապրած օրերի ամսասանք:

Բացառապես անդրադարձել ենք կյանքից հեռացած անձանց հիշատակն անմահացնելու նպատակով հորինված վիմագիր ստեղծագործություններին ու էպիտաֆիաներին: Նյութը գրի ենք առել Գյումրու հին գերեզմանոցից (ավանդական գրառումներ) և Շիրակի գերեզմանոցից (արդի գրառումներ): Քննել ենք նրանց հորինվածքի ուրույն գծերը, գաղափարական ուղղվածությունն ու թեմատիկայի բազմազանությունը: Հայ քարա-

գործ վարպետների ճարտար ձեռամբ փորագրված հիշատակագրումները, գեղարվեստական արժանիքից բացի, հայ ժողովրդի կյանքի, կենցաղի վկայագրեր են: Այսպես, Գյումրու հին գերեզմանոցում տարածված են անձի զբաղմունքին առնչվող տապանաքանդակները (զինագործի, դարբնի գործիքների պատկերումով): Արտահայտելով անհատի զբաղմունքը, նախասիրությունները, երկրային ու երկնային պատկերացումները՝ գրառված տապանագրերն ունեն պատմական կարևոր սկզբնաղբյուրի արժեք:

Էպիտաֆիաները կառուցվածքով տարբերվում են նորօրյա գրառումներից, թեև վերջիններիս մեջ պահպանվում են ավանդական հորինվածքի բնորոշ գծերը: Հորինվածքի ավանդական ձևին հատուկ է բանաձևային սահմանումը՝

Աստ հանգչի խաղաղութեամբ Մարիամ Ավիրեանց (ծնեալ 1783 վախճ. 1831թթ.):

Աստ հանգչին ոսկերք Վարդիթեր Թոփչեանցի, Ով հանդիպի, տա ողորմի:

Կամ՝ Այս է տապանն հանգուցյալ Գարեգին Ոգոմյանի:

Աստ հանգչի Բեթղեհեմ՝ կինն Հակոբի:

Անբախտ Ալմաստն եմ, կինն Եղիայի...

Բովանդակային առումով էպիտաֆիաները յուրօրինակ զրույց են կյանքից անժամանակ հեռացողների և ապրողների միջև: Դրանք խորհրդածություններ են կյանքի ու մահվան, այս ու այն աշխարհների մասին և հաճախ ունեն բարոյախրատական քարոզի, բախտի դեմ տրտունջի ու բողոքի շեշտադրում: Ի տարբերություն հին տապանագրերի՝ նորօրյա վիմագիր ստեղծագործությունները հորինված են գերազանցապես երկու եղանակով. մի մասի մեջ քնարական հերոսը կյանքին հրաժեշտ տվող անձն է, մյուս մասում՝ նորահայտ հորինողը (առավել հաճախ պատումը ներկայացվում է մտերիմ հարազատի անունից):